

Արագածոտնի մարզպետը հանդիպել է ԼՂՀ նախագահի, վարչապետի եւ պաշտպանության նախարարի հետ

01.05.2015

Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի նախաձեռնությամբ ապրիլի 30-ին կազմակերպվել է երկօրյա այցելություն ԼՂՀ պաշտպանության բանակում Արագածոտնի մարզից ծառայող զինվորներին: Նրանց հետ Արցախ է մեկնել նաեւ մարզպետը: Մայիսի 1-ին կայացել է Սարգիս Սահակյանի հանդիպումը ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանի հետ: Վարչապետը տեղեկացել է Արագածոտնի մարզից ժամանած հյուրերի եւ զինծառայողների հանդիպման մանրամասների մասին, քննարկվել են համատեղ իրականացվելիք ծրագրեր: Այնուհետեւ մարզպետ Սարգիս Սահակյանին ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Մարզպետը նախագահի հետ զրուցել է ինչպես իրենց այցելության մասին, այնպես էլ ներկայացրել է Հադրութի շրջանի հետ Արագածոտնի մարզի համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերը: ԼՂՀ եւ Արագածոտնի ղեկավարները կարեւորել են զինծառայողների եւ նրանց հարազատների հանդիպման այս ձեւաչաճը եւ պայմանավորվածություն է ձեռք բերվել այն դարձնել ավանդական, ամրապնդել ընտանիք-բանակ կապը:

Սարգիս Սահակյանը հանդիպել է նաեւ ԼՂՀ պաշտպանության նախարար Մովսես Հակոբյանի հետ: Նախարարը առանձնակի գոհունակություն է հայտնել Արագածոտնի մարզից իրենց մոտ ծառայող զինվորների մասին: Նրանք դրսևորվում են իրենց պարտաճանաչությամբ, կազմակերպվածությամբ եւ խիզախությամբ, ինչի համար արժանանում են հրամանատարության շնորհակալությանը եւ խրախուսանքին: Մարզպետը եւս կարեւորել է համանման այցելությունները, նշելով, որ իրենց ընտանիքների հետ հանդիպումները բարոյա-հոգեբանական մեծ խթան են զինծառայողների ծառայությունը լավագույնս անցկացնելու համար:

Նշենք, որ պատվիրակությունը բավականին ստվար է: Խմբի մեջ ընդգրկված են նաև բժիշկներ, ինչպես նաև Ն. Բազմաբերդի երգի-պարի համույթը, որը առավել հագեցած է հետաքրքիր է դարձնում զինվորների և նրանց ընտանիքի անդամների հետ հանդիպումը: